

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվան 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրաստողը գիտում են ուղղակի
Тифлисс. Редакция „Мшакъ“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն շաբաթով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչէր բառին 2 կոպէկ:

“ՄՇԱԿ” ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թվին

ԿԸ ՀՐԵՏԱՐԵՎՈՒ ԵՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոների հե-
տեկալ օրերից:

Լրագրի դիրքը և պրոպագանդան նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵՎԱՆ ՀԵՌԵՆԻՆԵՐԻ «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրքի կարելի է ՄԻԼՅՆ
ԽՍՐՈՒՄԻՆՍԿԻՆ մէջ:

ԵՌԵՎԱՆԻ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով ТИФ-
ЛИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ԲՈՂԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Ֆրանսիա և Եւրոպայի շէնքերն տեսու-
թիւն: Նամակ երեսնից: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր: Արտաքին տեսուչութիւն:
Նապոլի: Արտաքին լուրեր: «Մշակ» հեռագիր-
ներ: Պատարարութիւններ: Բանասիրական
Հայ երիտասարդութիւնը:

ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Եթէ համեմատենք Ֆրանսիա-
յի և Եւրոպական միացած եր-
կիրների այժմեան դրութիւնը, կը
համոզվենք որ Ֆրանսիան եւրո-
պական միակ երկիր է, որ զբաղ-

ված է այժմ իր ներքին գործե-
րով և չէ մտածում ոչ պատե-
րագրի, ոչ նուաճումների մասին:

Եւրոպայի փրանսիական «La
France» լրագիրը հրատարակեց
նորերում մի շատ ընդարձակ և
զեղեցիկ յօդուած:

Եւ ճշմարիտ զգենք մի անցա-
ւոր հայեացք ամբողջ արեւմտեան
Եւրոպայի վրա:

Ենդին պատերազմում է կա-
պի և կարելի մէջ սպառնում է
կ. Պոլսին, երազում է իր ձեռքը
զգեւ Փոքր-Ասիան և Հայաստա-
նը, Եւստրո-Ունդարիան ձգտում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԵՎԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ

Թիֆլիսը որպէս և կ'ենտրոն

Թիֆլիսը իր այժմեան դրութիւնով ներկայաց-
նում է մի կենտրոն, ուր հանդիպում ենք մեր ե-
րիտասարդութեան բազմաթիւ տիպերին: Այս-
տեղ են գտնվում մեր մտաւոր գործիւնեան ներ-
կայացուցիչները — մեր խնայողները, այստեղ
է գործում մեր մտաւոր, այստեղ են խմբվում
գաւառներից մեր նշանաւոր ուսման, և վերջապէս
այստեղ են խոշոր և մանր գրամատենները հը-
րաշք են գործում առեւտրական հրապարակի
վրա:

Խմբագրատունը մէջ են անձնակազմութիւն-
ներ չը պիտի չօգտվեն: Եւ կը վեր առնեն առա-
ձին առանձին խումբեր միայն, որոնք պատկա-
շեւ են այս և այն գաղափարին և գործում են
մի որոշ ապարդիւ վրա: Բայց ինչ պէտք է
պատճ, որ մեր չըջանա այն աստիճան նեղ է, որ
ամեն մի խումբի վրա խօսելիս, ընթերցողը կա-

մայակամայ պիտի երևակայէ որ և իցէ անձնա-
ւորութիւն:

Սկսում եմ համարադասականներէ:

Աւարտելով իր ուսումը որ և իցէ համալսարա-
նում, կամ կիսաւարտ, երիտասարդը զբերել ծա-
րում մի կողմ է դնում, ապաւարտում է հմուտ
զերծակներից մէկին մի քանի ձեռք հագուստ,
գնում է ցիլինդր և պէսնէ, ջուրում է ձեռնոց-
ների համեստ գոյնները, թողնում է ծնօրի վրա մի
պուրակ մազ, և այս բոլոր պատրաստութիւններով
վերադառնում է իր հայրենիքը, ուր նրան սպա-
սում են հայր, մայր, բարեկամներ և վերջապէս
ազգը: Արտաքին կերպարանքը վատ չէ, ներկա-
յանում է ուսեալ մարդու բոլոր ընդունված ձե-
ւերը, իսկ ներքինը զգուշութեամբ թաղցնում է:
Նա քիչ է խօսում, չէ մտնում ծանր միջադրանու-
թիւնների մէջ, և միշտ աշխատում է ցոյց տալ,
թէ քարամարտում է: Բայց պատահած տեղը,
կը իր ատամների յարմար մարդ է գտնում, լա-
զզողում է, այլ ևս նրա սփիւղների և ճոռոմա-
բանութեանը չափ չը կայ:

Գա այն տեսակ տիպերիցն է, որ ձենց սկզբից
ուսման և գիտութեան վրա նայում էր որպէս մի
միջոցի վրա, որ իրան լաւ ապագայ պատրաստէ,
որ սովորում էր դիւլլո մի և արտօնութեան հա-
մար:

Մտնելով կենքի և հասարակութեան մէջ,
հանգամանքները, կարիքը, նպատակին համեմա-
կանանքները աստիճան գործադրում են նրա ուղի-
մութիւնը: Նա դառնում է մի ճարպիկ ուսուցիչ:

է տիրապետելու ամբողջ Բալկա-
նեան թերակղզին, Իտալիան ա-
զա՛հ չէր որ է նայում Տրիեստի
և Տիրոլի մի մասի վրա, Սլա-
ւոնիան աւերող 15,000 հոգի զօրը
է ուղարկում Կուրա կղզին և այն:

Եւրոպայի գրգռումները
ամեն տեղ մինչև անգամ Ենդ-
ինայում, հասցրին ահագին ապա-
ռիկների պետական գանձարանը:
Եւ մինչև որ արեւմտեան Եւրո-
պայի բոլոր տերութիւնները իրանց
բիւզթէտի պարտքերը ծածկելու
վրա են դարձրել իրանց ամբողջ
ուշադրութիւնը, Ֆրանսիան շա-
րունակում է հանգիստ կերպով
աշխատել և հաւաքում է իր եկա-
մուսների զուտ արդիւնքները....

Հասկանալի է, որ անընդհատ
ծախսերի նոր պրօէկտներ աչքի
առնել ունենալի և տեսնելով իրանց
տերութիւնների կողմից բռնաձ-
աշխարհակալ քաղաքականութեան
ընթացքը, ազգերը երկիւղի մէջ
են և ամենքը թէ Բերլինում, թէ
Վիեննայում, թէ Լոնդոնում, թէ
Լիսաբոնում և թէ Մադրիդում
հարցնում են միմեանց՝ այդպիսով
ո՞ր կերթանք: Եւ մենք մօտաւոր
պատերազմ են գուշակում, բայց
որտեղ և ո՞ւմ հետ, — չը գիտենք...

Բայց երեւոյթիւն, բացի Ֆրան-
սիայից միակ երկիր, որ արտա-
քուստ խաղաղ է երևում, — դա
Գերմանիան է: Բայց նա էլ պե-

տական նոր ծախսերի մէջ է ընկ-
նում՝ անդադար զինաւորվելով և
անդադար զօրք պահելով: Նա
էլ, թէ և ոչ անմիջապէս, խառն-
վում է այժմ արտաքին, պատե-
րագրական քաղաքականութեան
մէջ:

Գերմանիայի ուրուականը Ֆր-
անսիան է: Ֆրանսիան լուծում է
և շարունակում է աշխատել իսկ
Գերմանիան կարծում է գուցէ
նա պատրաստվում է պատերազ-
մի:

Ֆրանսիայի գործերի այդ դը-
րութիւնը նպաստաւոր է: Ինչ-
քան ուրիշները աւելի կը վատնեն
իրանց ոյժերը, այնքան Ֆրանսիան
թող հետեւի խելացի տնտեսակա-
նութեան, աշխատանքի և խնա-
յողութեան պրինցիպներին, ու-
րիշն հարստանայ: Որքան Եւրո-
պան աւելի կը հետեւի վատնող և
քանդող քաղաքականութեանը,
որքան խաղաղ ժամանակ աւելի
զօրք կը պահէ, — այնքան կը շտա-
պենի ապագայ քաղաքակրթու-
թեան սկզբունքի իրագործումը՝
զինաթափ լինելը:

«La France» լրագրի յօդուա-
ծը վերջացնում է հետեւեալ խօս-
քերով:

«Թող գնան եւրոպական պե-
տութիւնները, ուր որ կամենան,
մեզ ի՞նչ փոխ: Գուցէ նրանք
ընթանում են դէպի կատարեալ

ցանկալի նպատակին: Անունեան նա կարծում է
հասարակութիւնից և սկսում է իր նեղ չըջանի
մէջ գործել: Նա, որ առաջ չըղծողութեան էր ամ-
բողջ հասարակութեանը, այժմ սկսում է չըղծող-
թիւ իր պաշտօնակիցներին, իր մեծաւորին, որ
ոտքը նրա օգնութեան վրա դնելով, կարողանայ
բարձրանալ իր բռնած դիրքի աստիճանները:

Բայց որտեղից, երբ վարձվեցաւ նա այդ տե-
սած պարտիկայի, այդ տեսակ գործնականութեան
մէջ: — Ընտանիք տուեց նրան այդ դաստիարա-
կութիւնը: Նոյնը, ինչ որ գործում էր վաճառա-
կան հայրը, գործում է և բարձր ուսում ստա-
ցած որդին: Զանադանութիւնը միայն ձեռք և կըր-
թութեան աստիճանի մէջն է: Անկիրթ հայրը ա-
ւելի կոշտ կոպիտ կերպով էր խաբում, իսկ կըր-
թեալ որդին աւելի նրբացրել է խաբութիւնը:
Նա հարստահարում է իր խանութի մէջ, իսկ դա
հարստահարում է մի ուրիշ ասպարէզում: Գործո-
ղութիւնների բնասողութիւնը չէ փոխվում: Այս
պայմանների մէջ ճին և նոր սերունդը ծնվում են
միայն: Գտնվում են, այս, և ազնիւ անձնաւոր-
ութիւններ, որոնք աւելի մաքուր ճանապարհով
են դիմում իրանց բարեպաշտին, բայց ցանկում պէտք
է ասել, որ այսպիսիները բացառութիւն են հա-
մարվում:

Գառնանք դէպի միւս տեսակ ուսանողները,
որոնք յափշտակված էին բարձր գաղափարներով,
որոնք պատրաստվել էին իրանց հասարակութեանը
և ազգին ծառայելու:
Գլուխը լցրած զանազան ծրագրերով, նա

1897

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ Վերափառ-
կաթողիկոսը տեղական երկսեռ դպրոցներին մի
քանի արդիւնքներ է յատկացրել, որոնք ապահո-
վում են ուսումնարանների գրութիւնը:

Նոյեմբերի 20-ին եղաւ տիկին Արտոի և պ.
Պաղիլայի առաջին կոնցերտը: Զարմանալի է միայն
որ թատրոնը լի չէր: Հաւաստի աղբիւրներէց
մենք խնայեց, որ կային մարդիկ, որոնք իրանց
համար գործ էին չինել ամբողջ քաղաքում տարա-
ծելու, որ բոլոր տոմարները ծախված են: Միթէ
այդ տեսակ միջոցներով ներկի է վնասել երա-
ժշտական աշխարհի այնպիսի նշանաւոր ներկայա-
ցուցիչներին, ինչպէս են տիկին Արտո և պ. Պա-
ղիլայ: Երկրորդ կոնցերտ կը լինի այսօր, հինգ-
շաբթի, նոյեմբերի 22-ին:

Թիֆլիսից, իրանց երկրորդ կոնցերտը տալուց յե-
տոյ, տիկին Արտո և պ. Պաղիլայ գնում են ԲՈՒՆ-
ԹԱՅԻՍ, որտեղ նոյնպէս տալու են մի կոնցերտ:

Կերակի, նոյեմբերի 18-ին ԹԻՖԼԻՍԻ Ս. Գա-
յանեան ուսումնարանի վարչութիւնը կատարեց
իր գործունէութեան տասնամեակը և աշակերտուհի-
ները պարզեցան իրենց հանդէսը: Թէ եկեղեցին
և թէ ուսումնարանը լցվել էր մեր հասարակու-
թեան ամեն դասակարգին պատկանող մարդիկնե-
րով: Հանդէսին ներկայ էր և Ս. Գաբրիել արքե-
պիսկոսը: Պատարագը վերջանալուց յետոյ կա-
տարվեցաւ հանգուցեալ Գ. Սաւաքայեանցի և
բոլոր այն հանգուցեալներին հոգեհանգիստը, որոնք
այս տաս տարվայ շրջանում գործել էին Գայա-
նեան ուսումնարանում: Պ. Ա. Նահապետեանը
կարգաց մի հաշիւ, որի մէջ մասնաւորապէս
նկարագրված էր թէ ինչ միջոցներով ուսումնա-
րանը հիմնվեց, որոնք էին սկսողները և բոլոր այն
անձինքները և բարերարները ցուցալը, որոնք թէ
նիւթապէս և թէ բարոյապէս այս տաս տարվայ ըն-
թացքում օգնել են ուսումնարանին: Կարգացվե-
ցան այլ են շատ ձուներ և ապա սրբազան առաջ-
նորդը խօսեց, քաջալերելով վարչութեան անդամ-
ներին, ուսուցիչներին և աշակերտներին, որից յե-
տոյ միմեկին աղ- սկսեցաւ: Վիճակախաղի հա-
մար պատրաստված էր ուսումնարանի դահլիճը,
որի պատերը վրա կպրծած էին աշակերտուհիների
զանազան տեսակ և դասնախարանի ձեռագործ-
ներ, որոնց մէջ իր վրա էր դարձնում հասարա-
կութեան ուշադրութիւնը Հայաստանի ձեռագործ-
մեծ պատկերը: Վարչութեան անդամները, ուսու-
ցիչները և վարժուհիները կրճերի վրա կրում էին
կապույտ ժապաւենով ծ- տաւը, որպէս նշան
տանաճանախի: Վարչութիւնը տպագրել էր տուել
Գայանեան ուսումնարանի տաս տարվայ հաշիւը
«Տասնամեակ» անունով, որի մէջ կար և ուսում-

մնացածը ծախսել որ և իրէ հասարակական բարի
նպատակի համար: Որովհետեւ մեզանում ազգային
պարագմունքները ոչ միայն նիւթական շահ չեն
բերում, այլ պէտք է մի բան էլ իր գրպանից
ծախսել, որ գործը առաջ գնայ: Այդ ես ցոյց կը
տամ իր տեղում, երբ կը խօսեմ Թիֆլիսի մեր
գործիչների մասին: Այժմ տեսնե՛ք, ինչ է չինում
երիտասարդութիւնը իր ասպարէզներում:

Յնք որ նկատեցի իմ հետադարձութեան նախըն-
թաց դէպքում ուսանողները կենքի և աշխատա-
սիրութեան մասին, յայտնելով այն միտքը, թէ
գաւառացիները գերազանցում են բուն թիֆլիսե-
ցիներէն, նոյնը պէտք է ասեմ և այժմ: Եթէ
կը տեսնէք թիֆլիսում մի երիտասարդ, որ հե-
տաքրքրվում էր ազգային և հասարակական գոր-
ծերով, որ իր աշխատութեան մի մասը նուիրում
էր նրանց, —անպատճառ նա գաւառից եկած
պէտք է լինի, կամ ինքը, կամ հայրը,
կամ պապը: Բուն թիֆլիսեցին փայցած, ալաւ-
դակված և հրէշտ որ արարած է. նրա համար
հայ կամ հայի յատկապիտութիւն կոչված բանը
ցնորք է: Նա ընկնում է միշտ երկու ծայրայե-
ղութիւնների մէջ, կամ վարչութիւն է միայն
և փառքի ետեւից, կամ համալսարանից վերադա-
նալով դարձաւ գլխով և դարձաւ սրտով, լինում է
իր հօր հարստութեան ցեղը, և սկսում է շաղկա-
բար վաճակն այն բոլորը, ինչ որ ողորմելի հայրը
գիւղէ երկր հոգու, մարմնի և պատուի գնով: Այդ
վրացիացած ընտանիքների գաւառները ոչ մի օրի-
նաւոր բան չեն արդիւնաբերում: Գաւառացի երի-

նարանի լուսանկար պատկերը, և որի իւրաքան-
չիւրը 3 ր. էին ծախում: Վիճակախաղից 1500
ր. է գոյացել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՊՈՒՆԱ

Սեպտեմբերի 15-ին եսպոնեան Տօկիօ քա-
ղաքից գրում են եւրօպական լրագրիւններին, որ
այնտեղի թէ ներքին և թէ արտաքին քաղաքա-
կանութեան մէջ մի քանի նշանաւոր փոփո-
խութիւններ են պատահել: Ամենից առաջ
հարեանցի կերպով յիշե՛ք կայսերական մի
իշխանազնի ծնունդը. երկրորդ փոփոխու-
թիւնն էլ այն է, որ արտաքին գործերի
մինիստրը հրաժարվեց իր պաշտօնից: Այս
մինիստրութեան պաշտօնը մինչև այժմ վա-
րում էր պ. Տերազիմ Միւնիստրի, այժմ նա
հրաժարվելով այս մինիստրութեան պաշտօնից
ընդունեց ժողովրդական լուսաւորութեան
մինիստրի պօստը: Իսկ արտաքին գործե-
րի մինիստրութեան պաշտօնը յանձնվեցաւ
ճանապարհների հաղորդակցութեան նախկին
մինիստր Էմիլուէ Կարային: Դեռ յայտնի չէ
այս փոփոխութիւնների հիմնաւոր պատճառը,
միայն հասարակական կարծիքն այն է, որ
արտաքին գործերի նոր մինիստրն իր պաշտօնի
մէջ մեծ եռանդ ցոյց կը տայ նպատակաւ
դէպի Չինաստան ունեցած ձկուն քաղաքա-
կանութիւնը, և թէ դէպի այն պետութիւն-
ները, որոնք նպատակաւ հետ առեւտրական
յարաբերութիւններ են կապել:

Ասում են, որ պ. Էմիլուէ Կարա երկար ժա-
մանակ ճանապարհորդել է եւրօպայում: Նա
բաւականին աղատ կերպով խօսում է անգլիերէն
և եւրօպական քաղաքակրթութեան մասին
բաւականին լաւ ճաշակ ունի: Պ. Էմիլուէ
Կարայի առաջին օգնական է նշանակված
պ. Էմիլուէ, որ Ս. Պետերբուրգի եսպոնական
ներկայացուցիչն է, և որը, մի քանի տարի
այդ քաղաքում մնալով, յարմարվել է եւրօ-
պական բոլոր նիստ ու կացին: Կարծում են,
որ պ. Էմիլուէ միայն ժամանակաւորապէս
է նշանակված արտաքին գործերի մինիստրի
օգնական, և թէ փոքր ժամանակից յետոյ
նրա տեղը կը նշանակվի պ. Աօկի, որը մինչև
այժմ Բերլինի եսպոնական ներկայացուցիչն
էր:

տասնարդը թէ բարոյապէս և թէ մտաւորապէս
բարձր լինելով, հենց որ ընկնում է թիֆլիսում,
սկսում է հրաշքեր գործել: Թիֆլիսի հայոց նշա-
նաւոր խմբագրները, վարժապետները, գործիչները,
բժիշկները, դատաստանական ծառայողները և
մինչև անգամ խոշոր կապիտալիստները, բոլորը դա-
ւաւաջներ են: Եթէ կան մի քանի բուն թիֆլի-
սեցի գործիչներ, նրանց կարելի է մասնակցել համ-
բարեւ:

Մի տան տարի առաջ «Եւրոպիկութիւն» և
առհասարակ արքունական ծառայութիւնը թիֆ-
լիսի երիտասարդների համար իր ծաղիկաւ մօզայի
մէջն էր: Բայց այն օրից, երբ հիմնվեցան բանկեր,
երբ երկաթուղու ծաղը հասաւ այս քաղաքին,
բարձր ուսում ստացած երիտասարդութիւնը սկը-
սեց օրինել ազատ պարագմունքներ: Կարծես թէ,
ատենական տեղերի ճնշված օդը խեղդում լինէր
նրանց: Այժմ մի իւրիստ բարեւք է համարում ա-
զատ փաստաբանութիւնը կամ նօտարիոսի կան-
տօրան, քան թէ նախնական դատարանում լի-
նել դիւանի անդամ: Ֆինանսական ձեռնարկու-
թիւնները աւելի հրապուրում են մեր երիտասարդ-
ներին. բանկերը լցված են նրանցով: Բնական
կենտրոնի բնական ոգին բայց է արել նրանց ա-
ռաջն մի նոր ասպարէզ: Հատկապէս մի հո-
ղեր և անտառներ թիֆլիսի չրջակայքում, կամ
Վրաստանի կողմերում: Ոմանք կառավարում են
այս և այն գրամատիքով կարուածները: Ոմանք
աքցիաների հետ են խաղում: Իսկ շատերը,
որոնք առաջ արհամարհում էին վաճառականու-

Մի և նոյն քաղաքից նոյնպէս չեն մոռա-
նում հարրդելու, որ սեպտեմբերի 3-ին
հասել է եսպոնական Խօհօհամա քաղաքը
չվեղական Վ. է գա անունով նաւը, որ եւրօ-
պայի և Ասիայի հիւսիսային ծովերի արշա-
ւանքներից յետոյ, յաջողութեամբ անցաւ
Բերլինցեան նեղուցը, և Նորդէսիկի օդը պրօ-
ֆեսորին վեգանաւորներին հետ միասին բերեց
այդ քաղաքը:

Վերջապէս ուշադրութեան արժանի են
նոյնպէս և այն խօսքերը, որ գեներալ Գրանտ
ասեց Սանթրանցիսո գնալուց առաջ Միկա-
դօին հրաժարական ողջոյն ընդունելու ժա-
մանակ խօսած ճառի մէջ. այդ փեմ մնա-
բարեւի ժամանակ Գրանտը յիշեցրեց Միկա-
դօին, թէ ինչ ծանր հետեւանքներ կունենայ
օտար պետութիւնների եսպոնական կայսրու-
թեան ներքին գործերի մէջ խառնվելը: Այս
խօսքերով գեներալ Գրանտ կամենում էր քա-
ջալերել կայսրին, որ նա շատ դիւրաթեք չը
լինի օտար պետութիւնների հետ կապվող
մաքային պայմանների հարցի մէջ:

Տօկիօի Թիթիկիցը վերջացնում է նամակը,
յոյս յայտնելով, որ բարեբաղդաբար Գրանտի
խօսքերը մեծ նշանակութիւն չեն ունենայ
նպատակաւ և օտար պետութիւնների մէջ
կազմվող առեւտրական նոր յարաբերութիւն-
ների մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Քէյտերի ընկերութեան» Կ. Պօլսից, նոյեմ-
բերի 20-ից հեռագրում են հետեւեալը. «Վանի ան-
գլիական հիւպատոս, պ. Կլէյտօն յիշեցրեց տեղական
նահանգապետին, որ քրիստոնեայ երկապործներին
սով է սպառնում, և որ նրա տուած խոտմունքը
աշակցելու և օգնելու իրան չէ կատարվել: Այս
գործի վերաբերութեամբ նա շատ անմիջեպ պա-
տասխան ստացաւ Վանի նահանգապետից, որի
պատճառով սըր Հէնրի Լէյթը դիմեց Բ. Գրանթ
և պահանջեց, որ նահանգապետը ներողութիւն
խնդրի և բաւականութիւն տալ հիւպատոսի պա-
հանջներին:

—«Standard» լրագրին Ալեքսանդրիայից հեռա-
գրում են, նոյեմբերի 20-ից հետեւեալը. «Քէյտի մի-
նիստրների խորհուրդ կայացաւ Խէյթիմի նախագա-
հութեամբ Գորդօն փաշայի հեռագրիւնների բովան-
դակութիւնը քննելու համար: Հարէշտանի կայսրը
պահանջում է իր իրաւունքների ճանաչվելը Սու-
ղանի և Նուբիայի վրա. կայսրը նոյնպէս երկու
միլիօն ստերլինգ վճարեց է պահանջում: Ուրիշ ցե-
ղերի մահմետական առաջնորդները, 30,000 մարդ-
կանց առաջնորդներով ապստամբվել են: Ապստամբ-

թիւնը և կապաւառութիւնը, որպէս ստոր պա-
րագմունքներ, այժմ սկսել են նոյն գործերով
զբաղվել: Ալեքսանդրիան և Կոմիսիօններութիւնը
նոյնպէս ոչ սակաւ գրաւում են մեր երիտասար-
դներին: Կան օրինակներ, որ համալսարանական
երիտասարդը հիմնում է աղիւսի գործարան, կամ
արտասահմանից բերել է տալիս տախտակներ
սղոցելու մեքենաներ: Այս տեսակ ձեռնարկու-
թիւնների մէջ, կամ առհասարակ առանձին պա-
րագմունքներով զբաղվողները լինում են խիստ
գործունեայ, ուրախ, զուարթ, նիւթապէս ապա-
հովված, և երբեք չեն կորցնում իրանց կենդա-
նութիւնը: Միւլդիւն արքունական ծառայողները
գործի միակերպութեան մէջ վաղորդը ծերանում
են, բլամատանում են, և մահը երբեմն աւելի
շուտ է հասնում, մինչև նրանք կը ստանային
պենսիա կամ ստատուս կի ս օ վ ե տ ն ի կ ի
չին:

Մեծ յաջողութիւն են գտնում Թիֆլիսում բը-
ժիշկները, մանաւանդ նրանք, որ ուստաց համալ-
սարաններում աւարտելուց յետոյ մի կամ երկու
տարի անց են կացնում արտասահմանում: Ոմանք
գլխի համար են գնում, իսկ ոմանք իսկապէս մի
բան սովորում են: Բայց ժողովուրդը միշտ նշա-
նակութիւն է տալիս Գերմանիա կաւ: Չլրանալիս
տեսած բժշկին, որպէս արտասահմանի ապրանքին:
Աւելի դժբաղդ են լինում այն ուսանողները, ո-
րոնք սովորել էին գիւղատնտեսական մասը երկ-
րագործութիւն, ազգեգործութիւն, գինեգործու-
թիւն և այլն: Իրանք կապիտալ չունենալով սովոր-

ները կապեցին Գորդօն փաշայի ճանապարհը, որը
օգնութիւն է պահանջում: Կառավարութիւնը հար-
կաւոր հրամանները տուեց:

—«Standard» լրագրին Վիեննայից հեռագրում են
նոյեմբերի 20-ից, որ այն վերանորոգութիւնների
պրօէկտները, որ Թիւրքիան առաջարկեց մշա-
ցնել եւրօպական և ասիական նահանգներում, նոր
բանակցութիւնների նիւթ կը դառնան պետու-
թիւնների հետ, ինտանալու համար, թէ արդեօք այս
առաջարկութիւնները փոփոխութիւններով թէ
ոչ անց փոփոխութիւնների պէտք է ընդունվին:

ՄԵՍԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

ՆԻՍՍԱՎԵՏԳՐԱԿ, 19 նոյեմբեր: Նո-
յեմբերի 15-ի գիշերն այստեղ երկաթուղու
կայարանում կալանաւորվեցաւ մի երիտասարդ,
որի պայուսակը լքցված էր զանազան տե-
սակ թուեւաւոր և ճայթող իրեղէններով: Նրա
պայուսակի մէջի եղածը յայտնվեալ յետոյ,
նա սկսեց կայարանի մէջով վազել, յետոյ ան-
ցնելով բէլաները, նա ուղղեց իր ընթացքը դէ-
պի մերձակայ զօրանցիները, բայց զինուոր-
ները նրան բռնեցին, բայց այդ միջոցին
նա զենքը ձեռին յուսահատ կերպով ընդդի-
մադրութիւն էր գործում:

Կ. ՊՈԼԻՍ, 18/30 նոյեմբեր: Այն լուրը,
որ իբր Մուխտար փաշա սպանված է այբան-
ցիներէն, սուտ է. Մուխտարը գնում է դէպի
Դուսինիէ այսօր, նոյեմբերի 19-ին նա կը
յայտնվի Դուսինիէի մօտ:

ԲԵՐԼԻՆ, 19/31 նոյեմբեր: Ներէ Վիլհելմ
կայսրը տեսնվեցաւ Գորգաօվի հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբեր: Պետական
բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ
94 ր. 25 կ., երկրորդ 93 ր., երրորդ 94 ր.
2 կ., չորրորդ 94 ր. 12 կ., ներքին 50% ա-
ռաջին փոխառութեան տոմսակը—232 ր.,
երկրորդ 226 ր. 50 կ., արեւելեան առաջին
փոխառութեան տոմսակն արժէ 90 ր. 50 կ.,
երկրորդ 90 ր. 50 կ., ոսկի 7ր. 84 կ.: Ռու-
սաց 1 բուրլ Լօնդօնի վրա արժէ 25,36 պէնս.
Տրամադրութիւնն ամուր է:

ԽՈՒՄԱՅԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

րած մանագլուխութիւնը իրանցելու համար, մնում
են անգործ: Իսկ կալուածատէրները չեն հրաւի-
րում նրանց, որովհետեւ կանոնաւոր դիւղատնա-
տեսութիւնը դեռ մուտք չէ գործել կովկա-
սում:

Համարիտն ասած, շատ դժուարին է լրագրա-
կան յօդուածի մէջ ցոյց տալ այն ընդարձակ աշ-
խարհը, ուր զանազան սոսկալեցներում գործում
է մեր համալսարանական երիտասարդութիւնը:
Ես պէտք է նկարեմ միայն ընդհանուր գծերը:
Այժմ մնում է մի քանի խօսք ասել այն երիտա-
սարդների մասին, որոնք աւարտում են կամ կի-
սաւարտ դուրս են գալիս զանազան գիմնալիա-
ներից և միջնակարգ դպրոցներից, և համալսարան
մտնելու միջոցներ չունենալով, մնում են Թիֆլի-
սում: Գրանք լինում են ըստ մեծի մասին աղ-
քաւանքի որդիներ և դպրոցի նստաբաններ թող-
նելուց յետոյ, ստիպված են աշխատել օրական
հացի համար: Մեր վաճառականները նրանց չեն ըն-
դունում գործակալատարութեան մէջ, մտածում են,
որ ուսեանքներն չեն կարող հնազանդութեան մէջ
պահել, որպէս իրանց սովորութիւնն է: Ուրիշ
ոչինչ չէ մնում նրանց, բացի արքունական ծա-
ռայութիւնից, բայց վարժապետութիւնից մանր
դպրոցներում, կամ անգործ թափառելուց: Կրանք
լինում են աւելի փառասէրներ. քան համալսարա-
նականները, ստոր պարագմունքների լայնացը չեն
անում: Գեղին կօճակները և մունդրը սատիկ
հրապուրում են նրանց:

(Կը չարունակվի)

Типографія А. А. Михельсона